Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 10 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևան քաղաքի Գայի անվան թիվ 129 միջնակարգ դպրոցի դահլիճի կահավորում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշկան գյուղի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի ընդունարանի և աստիճանավանդակի հիմնանորոգում», «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արծնի գյուղի գազաֆիկացում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանային գյուղերի համար գյուղտեխնիկայի ներմուծում» ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական համաժողովի և տարածաշրջանային գործնական մեթոդական դասընթացի կազմակերպման ծրագիրը.

Թռչունների պահպանման հայկական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դսեղում հյուրընկալության և ինֆորմացիոն կենտրոնի ստեղծման» ծրագիրը.

Երևանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցու կողմից իրականացվող «Մանուկներին հումանիտար օգնություն» ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: